ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԵՐԿԱՅՈՒՄ ԱՐԺԱԳԱՆՔՈՂ ԱՆՑՅԱԼԸ

> Եթե քրիստոնյա մեկը դեպի թուրքը դավաճանություն գործի, մեռնի կամ խրատվի՝ աչքերի կամ երկու ձեռքերի պատուհասմամբ և ապաշխարի:
>
> Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքից»

Գործ ԿԱՄՈ ԳՅԱՆՋՅԱՆԻ

Կիլիկիայի հայկական պետությունը... տարածքով, երևի թե, այսօրվա Հայաստանի չափ, այսօրվա Հայաստանի պես բարոտ–բարբարոտ՝ երեք կողմից թշնամական երկրներով ու լեռնախմբերով շրջապատված: Քաղաքակիրթ աշխարհի հետ ընդամենը մի կապ–կամուրջ ուներ այդ փոքրիկ երկիրը՝ Միջերկրական անվանված երկրային ծովն էր՝ ճիշտ այնպես, ինչպես թշնամական օղակից դուրս մի փոքրիկ կամուրջ ունի այսօրվա Հայաստանը՝ երկնային ծովը: Երկրային ծովը հատող քանի՞ նավ ուներ Կիլիկիան, քանի՞ օդանավ ունի Հայաստանը՝ առայժմ միակը համարվող երկնային պահապան ծովում...

Մոտ երկու հարյուր տարի գոյատևեց հայկական այդ անկախ պետությունը՝ Ռուբինյան, Հեթումյան, Լևոնյան, Լուսինյան արքայական դինաստիաներով, և գոյատևման հզոր լծակներից մեկը իրավական ներքին օրենքների խստագույն կիրառումն էր՝ կենտրոնական և ուժեղ պետականություն ստեղծելու, թերևս, ամենակայուն նախապայմանը, որն ինչ–որ տեղ պակասում է այժմյան Հայաստանի Հանրապետությանը:

Պատահական չեն, չէ՛, ներկայի ու անցյալի այս զուգահեռները, որովհետև Կիլիկյան Հայաստանի տնտեսական ու քաղաքական իրավիճակը գրեթե այնպիսին էր, ինչպիսին է այժմ: Երկիրը նոր–նոր թևակոխում էր անկախության ճանապարհը: Եվ դեռևս միջազգային հզոր պետություններից, ասենք, Բյուզանդիայից կամ Գերմանիայից պաշտոնապես չճանաչված, բայց իրականում հայոց թագավոր դարձած Լևոն Մեծը, որը հարևան թշնամական հորդաների դեմ տարած փայլուն հաղթանակներով հասել էր գերիշխանության, իբրև պետության կայացման առաջին ու կարևոր քայլ, արքունիք է հրավիրում հռչակավոր գիտնական ու հասարակական–եկեղեցական գործիչ Ներսես Լամբրոնացուն, իբրև խորհրդատու և արքայադպիր, և խնդրում կազմել հայոց առաջին օրենսգիրքը: Գրեթե նույն ժամանակամիջոցում, իշխանության անցնելուց հետո, Արևելյան Հայաստանում նույն կերպ է վարվում նաև Զաքարե Երկայնաբազուկ Զաքարյանը՝ Մխիթար Գոշ բազմահմուտ գիտնականին հանձնարարելով ստեղծել իր պետության օրենքների ժողովածուն՝ «Դատաստանագիրքը»:

Մեր պատմության չափազանց հետաքրքրական էջերից են նշանավոր գիտնականի և արքայի նման համագործակցությունները, որոնք մի ավելորդ անգամ վկայում են, որ երկրի ու պետության փրկությունը ամենից առաջ մարդկանց հոգիների փրկության մեջ է, որ կայուն ու գործող օրենքով նախատեսված հազար ու մի պատիժներով, ապաշխարությամբ ինչ–որ չափով կարելի է զսպել մարդուն դեպի մեղքն ու մեղսագործությունը մղող սատանայի սանձակոտոր ծավալումը: Տեր Աստված, այդպե՛ս, հենց այդպե՛ս են իրավական պետություն կառուցում՝ իրավական կայուն ու գործող օրենքներով...

Իսկական մտավորականի ու աշխարհիկ տիրոջ համագործակցության փորձն արդեն կար նախկինում և տվել էր շոշափելի արդյունք՝ հայոց գրերը, Վռամշապուհ թագավորի, Սահակ Պարթև կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոց մտավորականի միասնական տեսք ու կերպարանքով: Եվ հավանաբար այդ համագործակցությունն էր պակասում Տիգրան Մեծին, որը սրով նվաճած անծայրածիր երկիրը, պատկերավոր ասած, չվավերացրեց գրչով, որպեսզի շարունակելի ու տևական լիներ ժամանակի թոհուբոհում:

Այդ անհրաժեշտ ու պարտադիր համագործակցության օրինակները, որոնք պսակվեցին նախ հայեցի գիր ու գրականության հրաշագործ ծննդով, ապա՝ Կիլիկիայի հայոց պետականության ամրապնդումով, մեր պատմության ու նախնիների ուսանելի դասերն են՝ անցյալում, ներկայում և ապագայում: Չյուրացնել այդ առաջնահերթ դասերը, այլ կերպ ասած՝ անկախության տարրական այբուբենը, նշանակում է ձեռք քաշել սրով, պայքարով, տառապանքով, արյամբ նվաճված ազատությունից, այն դարձնել թղթի վրա ձևականորեն դրոշմված և տնտեսապես, քաղաքականապես, հոգեպես անիրագործելի: Այս իմաստով, թվում է, ուշացել ենք զուտ հայեցի օրենսգիրք ստեղծելու ճանապարհին...

Կիլիկիո Լևոն Մեծ արքայի խորհրդատուն և օրենսգետը, ինչպես նշեցինք, Ներսես Լամբրոնացին էր՝ մի բազմահմուտ ու քանքարավոր անհատ, որին ժամանակակիցները միայն «մեծաշնորհ ու սքանչելի» ածականներով են հիշատակում: Ավելորդ չէ մեջբերել 13–րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու բնորոշումը. «Գրիգորիս հայրապետի ժամանակ կային անվանի ու իմաստուն վարդապետներ. սքանչելի Ներսեսը՝ նույն կաթողիկոսի հարազատը, և մյուս Ներսես եպիսկոպոս Լամբրոնացին՝ Հեթումի եղբայրը, որ թարգմանեց Հովհաննու տեսիլքի մեկնությունը, Հռոմի Գրիգոր պապի պատմությունը և սուրբ Բենեդիկտոսի օրենսդրությունը: Գրեց նաև Դավթի սաղմոսների, Սողոմոնի առակների, սուրբ պատարագամատույցի, Հովհաննու Ավետարանի աղոթքների մեկնությունները»:

Եվ այսպես՝ հայոց առաջին օրենսգիրքը ծնվեց Ներսես Լամբրոնացու և Լևոն Մեծ արքայի հանճարեղ ջանքերով: Իսկապես որ, առաջինը, որովհետև մինչ այդ դեռևս չկար Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»: Պատահական չէր, որ Լամբրոնացին գանգատվում էր, թե՝ «կաթողիկոսի գրապահոցում չգտանք այլ օրենքներ, բացի «Կանոնագրքից»: Պակասը լրացնելու համար նա ստիպված եղավ թարգմանելու այլ պետությունների, մասնավորապես բյուզանդական ու ասորական օրենքների ժողովածուները: Դա սոսկական ու տառացի թարգմանություն չէր, այլ հարմարեցված էր հայկական կյանքի առանձնահատկություններին, վարքուբարքին, սովորություններին, հավատալիքներին: Առանձնակի ուշադրության են արժանի Լամբրոնացու թարգմանած «Զինվորական օրենքները»՝ 57 իրավական հոդված, որ գործադրվել է հայոց բանակում: Հետագայում, 13–րդ դարի կեսերին այդ օրենքներն ընդարձակեց և առավել ընդգրկուն դարձրեց Սմբատ Սպարապետը (Գունդստաբլ), որը հայ (Ներսես Լամբրոնացի, Մխիթար Գոշ) և օտար աղբյուրների հիման վրա ստեղծեց ամբողջական ու գործուն կանոնագիրք՝ հայոց կյանքի գրեթե բոլոր բնագավառներն ու նրբերանգներն ընդգրկող. դա և պետականությունն ամրապնդող սահմանադրություն էր, և ներքին կյանքը կարգավորող, մարդկանց իրավունքները պաշտպանող, օրինախախտումների համար զանազան պատիժներ հաստատող կանոնադրություն էր, որը չափազանց կարևոր դեր խաղաց Կիլիկիայի հայկական թագավորության շուրջ 200–ամյա պատմության ճանապարհին:

Իսկապես որ, արքայական հիշատակելի ժամանակներ էին, և հայոց արքայի, իբրև երկրի բարձրագույն իշխանավորի, անսահմանափակ իրավունքները վավերացնող սահմանադրություն էր Սմբատ Սպարապետի ստեղծածը:

Օրենսգրքում մեծ տեղ էր հատկացված հայոց բանակի ամրապնդմանը, զինվորական կարգուկանոնի հաստատմանը, առանձին միավորների միաձույլ շաղախով մարտունակ ու կազմակերպված զորք ունենալու գործին: Այժմ, դարերի հեռվից կարելի է մեկ առ մեկ մտաբերել այն փառահեղ հաղթանակները, որ Կիլիկիայի հայկական բանակը տարել է երկիր ներխուժած բազմաթիվ և բազմազգի հորդաների դեմ: Հենց իր՝ Սմբատ Սպարապետի զորավարական ողջ գործունեությունը կարելի է պատկերացնել այդ հաղթական ճակատամարտերի համայնապատկերում... Սակայն, եթե չլինեին խստագույնս գործող զինվորական օրենքները, Կիլիկիայի ազգային բանակը հազիվ թե նման հաջողության հասներ: Սմբատ Սպարապետի «Կանոնագիրքը» գործում էր անխաթար, թվացյալ դաժանության մեջ՝ մինչև ճշմարիտ ու արդարացի: Նա խրախուսում–բարձրացնում էր անձնդիր, հայրենիքի նվիրյալին և, ընդհակառակը, դաժանորեն պատժում էր զինվորական կյանքում

տեղ գտած թուլամորթությունը, վախկոտ
թյունը, դասալքությունը, դավաճանությ
նը, որոնցից յուրաքանչյուրի համար օրե
քով նախատեսված էին զանազան պա
ժամիջոցներ: Ահա, օրինակ, իրավակ
հոդվածներից մեկը, ուր պատժվում է հա
րենիքի հանդեպ դավաճանությունը. «Ե
յուրուք վրա հաստատի, թէ թշնամիսն կա
հավելու, անարգ նախատանօք պատուհ
սի ոչ միայն ինքն, այլ և որք գիտային զն
գործն»: («Եթե մեկի վրա հաստատվի,
ուզում է թշնամու կողմն անցնել, անա
նախատինքով պատուհասվի ոչ միայն
քը, այլև նրանք, ովքեր գիտեին այդ մ
սին»): Եվ որովհետև այն ժամանակ էլ, ի
պես այժմ, եղել են դասալիքներ, զինվոր
կան ծառայությունը կամովին լքողներ,
րենքը մի շարք կետերով անդրադարձել
նաև նրանց: Ընդ որում պատիժ էր սահմա
ված ոչ միայն դասալիքի, այլև նրա հար
զատների համար, ովքեր պատերազմի ժ
մանակ միջամտում և դրանով իսկ արգել
էին սեփական որդուն զինվորության վե
նելու գործը. «Եթէ որ զիւր որդին ի ժամ
նակ ճակատուն խնայէ զինվորել ի պա
րազմ, աքսորեսցի և յընչից իւրոյ զրկե
խայտառակեսցի նա թէ և որ զորդին ի
զինվորութեան, աքսորեսցէ»: («Եթե մ
ճակատամարտի ժամանակ իր որդ
խնայի և չուղարկի պատերազմելու, աք
վի և ունեցվածքից զրկվելով, աքսորվե
խայտառակվի թե ինքը և թե իր զինվոր
որդին»):

Դասալիքներին և դասալքությունը հով
նավորողներին արժանի խստագույն պ
տիժ՝ ուսանելի բոլոր ժամանակների հ
մար և դժբախտաբար մեր օրերում ստե
վող հայկական բանակում իր ամբողջ
բությամբ չկիրառվող...

Սակայն անհնար է խորապես ընկա
այդ օրենքի տարբեր հոդվածների իմա
ու բովանդակությունը, առանց պատկեր
նելու, թե ինչպիսի կառուցվածք ուներ Կի
կիայի ազգային բանակը: Հինավու
գրչագրերն այդ մասին, փառք Աստծո,
դել են սպառիչ տեղեկություններ: Դա ա
նից առաջ զուտ ազգային բանակ էր, ո
հասարակ զորականից մինչև սպարապ
տը՝ բացառապես հայեր էին՝ միևնույն
հերով ու գիտակցությամբ առաջնորդվ
Զորքը, որ բաղկացած էր 80–100 հազ
մարտիկից, ենթարկվում էր թագավ
նշանակած գլխավոր հրամանատար
սպարապետին: Կիլիկիայի զինված ուժ
հիմնականում կազմվել են արքայական
նակից, որն ունեցել է 12 հազար հեծյալ
հազար հետևակ, և իշխանների զորամ
րից: Այս վերջինները թագավորի կամ ս
րապետի հրամանով պատերազմների, կ
եռ զորահանդեսների և զորախաղերի
մանակ միացել են թագավորական զոր

ուշադրելով երկրի ռազմական ուժն ու հզո-
րությունը՝ հուսախություն հայ ժողովրդի և
սարսափ թշնամիների:

Ինչ համար, սակայն, հաճելի է նկարագ-
ել, թե ինչպիսին էր Կիլիկիայի հայոց բա-
ակը զանազան տոնախմբությունների, ար-
աների օծման արարողությունների, զորա-
արժությունների պահին: Ահա առջևից,
բեղ համազգեստ հագած, ընտիր զենք ու
րահով զրահավորված, հենց բուն Կիլիկի-
յում բուծված ազնվազարմ նժույգներին
եծած՝ անցնում են Առաջին կարգի Աս-
պետները՝ զինվորյալք հայոց իշխանական
ներից, ովքեր զորավարժությունների, պա-
երազմների ժամանակ ցուցաբերած արի-
ության, ճարպկության, ռազմավարական
րվեստին տիրապետելու հմտությամբ
վաճել են այդ պատվավոր կոչումը: Իսկա-
ան ասպետական բանակ է, իսկ ասպետ-
երը, հայտնի է, բոլոր երկրներում աչքի են
նկել նախանձելի հավատարմությամբ դե-
ի իրենց զինվորական երդումը, թագավորն
ւ ժողովուրդը: Չէ, իսկապես որ, մեծ փառք
ւ պատիվ էր Առաջին Կարգի Ասպետ լինե-
ը, և հայոց ազնվական պատանին, դեռ վաղ
անկությունից թե զինավարժության և թե
պրատների բարձրագույն ուսումն առնե-
ով՝ ձևավորվում էր որպես ասպետ՝ ասպե-
ական հոգեբանությունը բնորոշող հիմնա-
ան գծերով: Երիտասարդների հոգում ար-
ատակալած՝ մարդկայնորեն բարի նա-
անձի արտահայտություն էր. Երկրորդ
արգի Ասպետը ե՛ւ մարտի դաշտում, ե՛ւ
րույմներում ձգտում էր, ռազմի և բարոյա-
անության նորմերը խստիվ պահպանելով,
աչքի ընկնել արիությամբ, թագավորին ու
ժողովրդին անմնացորդ նվիրումով, որպեսզի
տեղ գրավեր Առաջին կարգայինների
շարքում. դա զինվորին ոգեկոչող մեծագույն
ատիվն էր՝ նրա անբասիր անունն ու զո-
րությունը հաստատող, և տրվում էր ամենից
րժանավորներին:

Կիլիկյան Հայաստանում վարձատրվում
ն ե՛ւ արքայական, ե՛ւ առանձին իշխան-
ների զինվորները՝ հեծյալները, որոնք կազմ-
ած էին ազատներից, ամսական 12, հետ-
ակը, որն ավելի հասարակ ծագում ուներ, 3
ակով:

Վճարվող գումարի այս զրնգուն հակա-
րությունը ոչ այնքան այն բանի համար էր,
ընդգծվեր զինվորների ծագման տարբե-
րությունը, այլ ամենից առաջ սահմանված
, որ հետևակայինի հոգում բորբոքեր հե-
ալագորում ընդգրկվելու, այսինքն՝ ասպե-
ականության կարգը մտնելու ձգտումը:
ան, ամենօրյա վարժությամբ ու համառ
արապմունքով, հետևակայինը մղվում էր՝
րախաղերի ժամանակ հավաքված ժո-
վրդի և բարձրագույն հրամանատարների
աջ փորձելով ապացուցել իր գերազան-
ությունը, ասպետ դառնալ և այդպիսով վե-
ացնել շինականի և ազնվականի միջև գո-
ություն ունեցող անջրպետը: Իսկական ու
ողջ մրցակցություն, որն այսօր էլ տեղ
ր լինի, եթե կիրառվեր մեր բանակում: Բա-
ակը, ուրեմն, հասարակ զինվորից մինչև
արձրագույն հրամանատարը, վարձատր-
ում էր, չհաշված հանդերձանքը, զենքն ու
ահը, սնունդը՝ բոլորին ձրիաբար բաշխ-
ող:

Ասպետականություն... դա զինվորին ա-
ության, կարգապահության ու բարոյա-
անության մղող հոգեբանություն էր, որը
ատերազմների ժամանակ, փայլուն հաղ-
անակների միջոցով, բազմիցս ապացուցել
իր առավելությունը, մի բան, որը չափա-
անց շատ է պակասում այսօրվա Հայաս-
անի նորաստեղծ, բայց խարխլված բարո-
ականության բազմաթիվ օրինակներով
արուստ բանակում: Մի բանակ, որը դեռևս
ռաջնորդվում է նախկին Միության զինվո-
ական օրենսգրքով, և չունի ոչ իր ազգային
րենսդրությունը, ոչ վարձատրման համա-
արգը, ոչ էլ զինվորական դատն ու դա-
աստանը: Պարտադիր է, պարզապես
ելի օդի պես անհրաժեշտ է այսօրվա բա-
ակի օրենքները կազմելիս՝ հաշվի առնել
նցյալում, մասնավորապես Կիլիկյան Հա-
աստանում մշակված իրավական հոդված-
երը, որոնցից շատերը չեն կորցրել իրենց
րդիականությունը: Դրանք, համոզված եմ,
ո նոր–նոր առաջին քայլերն անող մեր
յժմյան բանակի հրաշալի խորհրդատուն
մասնակիցը կդառնան: